ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ
«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀՈԱԿ

Վարպետաց փ., 101
Հեռ. (0312) 5-51-42
museumshiraz@gmail.com

Գյումրի համայնքի
ղեկավարին փոխարինող
Ա. Առաքելյանին

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանի հաստիքացուցակում փոփոխություն անելու անհրաժեշտություն կա: Նշեմ, որ.

ա/ 2023թ. թանգարանն ունեցել է մոտ 6.000 (վեց հազար) վճարովի այցելու և տոմսերի վաճառքից առաջացած շուրջ 4.000.000 (չորս միլիոն) ՀՀ դրամ գումար:

բ/ 2024թ.՝ 13.000 (տասներեք հազար) վճարովի այցելու և շուրջ 9.000.000 (ինը միլիոն) ՀՀ դրամ գումար,

գ/ 2025թ.՝ 10.000 (տասը հազար) վճարովի այցելու և մոտ 7.000.000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ գումար:

Յուրաքանչյուր տարի թանգարանը սպասարկում է նաև բաժանորդային ծրագրի մեջ ընդգրկված հազարավոր աշակերտների, ինչպես նաև միջոցառումների մասնակիցների:

Այցելուների ակնհայտ աճը, ինչպես նաև Սիփան Շիրազի ստեղծագործությունները ցուցադրելու համար սրահի ավելացումը, ծանրաբեռնում են թանգարանի աշխատակիցների գործը: Բոլոր ցուցասրահները միասին կազմում են

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
... բաժին
ՍՏԱՑՎ 29.01 2026թ.
ՄՈՒՏՔԻ ԹԻՎ 6131

մոտ 200 քմ (199.86) տարածք: Նշեմ, որ այս պայմաններում թանգարանի գործող հաստիքացուցակով ունենք ընդամենը մեկ հսկիչ:

Ուստի, խնդրում եմ թանգարանի աշխատանքները բնականոն հունով ընթանալու, էքսկուրսիաները և ցուցանմուշների պահպանումը որակով և արդյունավետ կազմակերպելու համար տրամադրել մեկ հաստիք՝ ցուցանմուշների պահապանի ներգրավմամբ:

Թանգարանի տնօրեն՝ Լ. Պետրոսյան

27. 04. 26